



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թվականի №---Ս
քաղ. Երևան

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի մայիսի 23-ի №174Ս որոշումը, որով պահանջվել է դադարեցնել անհատ ձեռնարկատեր Էդվարդ Վարդանյանի (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) կողմից առանց թույլտվության 150.900 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը,

բ) Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 24-ի №ԱՍ-1180Հ գրությունը, որով անհատ ձեռնարկատերը տեղեկացվել է, որ Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի №174Ս որոշման պահանջները չկատարելու և առանց թույլտվության ռադիոհաճախականությունը շարունակելու դեպքում Հանձնաժողովը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի հիմքով, իրավասու է կիրառել տույժ կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով,

գ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց թույլտվության 150.900 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու փաստի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2018 թվականի հունիսի 11-ի N02/11.1/9990-18 գրությունը,

դ) որ Հանձնաժողովը 2018 թվականի հունիսի 13-ից վարչական վարույթ է հարուցել անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ դադարեցման որոշում ընդունելուց հետո վերջինիս կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին անհատ ձեռնարկատերը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 13-ի №ԱԲ-1410Հ գրությամբ,

ե) որ անհատ ձեռնարկատերը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «Ժբ» ենթակետը և 63-րդ հոդվածի 4.2-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ կիրառել տույժ՝ 4 000 000 (չորս միլիոն) դրամ գումարի չափով:
2. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում ամրագրված գումարը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է՝
 - 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
-- ----- 2018թ.